ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՄ- ԲԸԱՀ-ԱՇՁԲ - 12/1-6

ք. Արմավիր <13>> փետրվարի 2012թ.

<<ՀՀ Արմավիրի մարզպետարանը>>, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ.Կարապետյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ <<Պատվիրատու>> մի կողմից և <<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ- ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Տեր-Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա այսուհետև՝ <<Կապալառու>>, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Արմավիրի մարզի գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքները այսուհետև՝ Աշխատանք, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետ է սահմանվում՝ 20.08.2012թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի ներառյալ օրացուցային գրաֆիկի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և

հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը ներառյալ օրացուցային գրաֆիկը,

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել

վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը

ներառյալ օրացուցային գրաֆիկը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

3.4.10 Աշխատանքը հանձնելուց հետո՝ 3 (երեք) տարվա ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում վերացնել այդ թերությունները կամ վերադարձնել աշխատանքի համար սույն պայմանագրով վճարված գնի այն մասը, որը կազմում է թերություններն ամբողջությամբ վերացնելու համար անհրաժեշտ ծախսերի հանրագումարը կամ հատուցել Պատվիրատուի կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 երկու աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 20 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 57 580 144 (հիսունյոթ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար մեկ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ՝ որից 9 596 691 (ինը միլիոն հինգ հարյուր ինսունվեց հազար վեց հարյուր ինսունմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն է: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.2.Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, սակայն ոչ ուշ քան 01-ը սեպտեմբերի 2012թ., պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայամանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

5.4 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների ընդունելու դեպքում վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է

հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով ներառյալ օրացուցային գրաֆիկը՝ նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարներից:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև գնման պայմանագրի կնքումը կատարողը (կապալառուն, մատակարարը) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին (կապալառուին, մատակարարին) հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի

հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի (կապալառուի, մատակարարի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը (կապալառուն, մատակարարը) պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.5 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

8.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.7 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր Փ/Ա -18	ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 205032200482	հ/հ 900331131079
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ <<Արմավիր>> մ/ճ	Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04403097	ՀՎՀՀ 04415276
Ա.Տեր-Պողոսյան	Փ.Կարապետյան
Կ.Տ	Կ.Տ

Հավելված № 1
<<__13_>>_փետրվարի__ 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲՀԱՀ-ԱԵՁԲ-12/1-6 գնման պայմանագրի

Ծավալաթերթ - նախահաշիվ
ՀՀ Արմավիրի մարզի Բերքաշատ գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների

ՀՀ	Աշխատանքների անվանումը	Չափի միավոր	Քանակը	Արժեքը դրամով	
				Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6
	Քանդման աշխատանքներ				
1	Պատուհանների և պատուհանագոգերի ապամոնտաժում	մ²	53,5	1500	80250
2	Միջնապատերի քանդում	մ²	50	1200	60000
3	Խեցեղեն և խճանկար հատակների քանդում	մ²	440	200	88000
4	Մանրատախտակե հատակների քանդում	մ²	136,7	300	41010
5	Հախճասալի քանդում	մ²	100	400	40000
6	Միդիս շարվածքի պատերի քանդում	մ³	4,2	8500	35700
7	Զուգարանի պատերի քանդում	մ³	15	8500	127500
8	Շինաղրի հավաքում և բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա	տն	103,4	4500	465300
9	Տեղափոխում 5 կմ	տն	103,4	2500	258500
	Կառուցման աշխատանքներ				0
	Միջնորմներ և պատեր				0
10	Միջնորմների կառուցում 60մմ հաստության	մ²	75	2500	187500
11	Բացվածքների փակում ուղիղ կտրվածքի տուֆ քարերով	մ³	6	28000	168000
12	Բացվածքների ուժեղացում մետաղական էլեմենտներով	տն	0,3	450000	135000
13	Բացվածքների բետոնացում ուժեղացումից	մ³	1	37000	37000
	Բացվածքներ				0
14	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից դռների տեղադրում	մ²	10,8	39000	421200
15	Մետաղապլաստե սպիտակ պրոֆիլներից ապակեփաթեթով պատուհանների տեղադրում	մ²	42,8	34000	1455200
16	Պլաստմասե, սպիտակ գույնի պատուհանագոգերի տեղադրում, լայնքը 350մմ	մ²	264	3300	871200
	Հատակներ				0
17	Հատակի տակ բետոնե	մ³	2	35000	70000
18	Ցեմենտավազե հարթեցնող շերտ 20մմ հաստությամբ	մ²	40	1500	60000
19	Ցեմենտավազե հարթեցնող շերտ 20մմ հաստությամբ	մ²	554	1500	831000
20	Խճանկար հատակների պատրաստում 2 սմ հաստությամբ	մ²	554	3300	1828200
21	Խեցեղեն հատակների կառուցում	մ²	40	9900	396000
22	Հաճարե մանրահատակի պատրաստում	մ²	187	7900	1477300

23	Տախտակե հատակների հղկում	մ²	197	800	157600
24	Տախտակե հատակների և շրիշակների	մ²	197	1200	236400
25	Մանրատախտակե հատակների հղկում	մ²	963,3	800	770640
26	Մանրատախտակե հատակների երկշերտ լաքապատում	մ²	963	1200	1155600
27	Խճանկար հատակների նորոգում մինչև 1բ.մ. մակ.	տեղ	20	3300	66000
	Հարդարման աշխատանքներ				0
28	Արտաքին պատերի բարձրորակ ցեմենտավազե սվաղ	մ²	32	2400	76800
29	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ սվաղ ցեմ. ավազե շաղախ	մ	1451	300	435300
30	Արտաքին պատերի բարձրորակ հարդարում ֆասադային ներկով	մ²	396	1900	752400
31	Առաստաղների բարձրորակ գաջե սվաղ առանձին տեղերում	մ²	150	1800	270000
32	Առաստաղի մաքրում հին սոսինձից	մ²	1384	300	415200
33	Առաստաղի սվաղի քամաքրում	մ²	1384	1200	1660800
34	Պատերի բարձրորակ գաջե սվաղ առանձին	մ²	430	1800	774000
35	Պատերի գաջե սվաղ	մ²	56	1600	89600
36	Պատերի մաքրում հին սոսնձաներկից	մ²	3350	300	1005000
37	Պատերի սվաղի քամաքրում	մ²	3350	1200	4020000
38	Պատերի բարձրորակներկում լատեքսային	մ²	3990	1800	7182000
39	Առաստաղի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	մ²	1730	1800	3114000
40	Դռների և պատուհանների շեպերի բարձրորակ գաջե սվաղ	մ²	490	1600	784000
41	Պատերի բարձրորակ յուղաներկում	մ²	1400	1200	1680000
42	Պատերի երեսապատում հախճասալով	մ²	101	7500	757500
43	Կախովի առաստաղի պատրաստում շերտավոր պլաստմասե վահաններով	մ²	24,7	4500	111150
	Այլ աշխատանքներ				0
44	Մարգասրահի նստատեղերի կարկասի պատրաստում չորսուներից	մ³	0,2	145000	29000
45	Նստատեղերի իրականացում	մ²	12,5	7500	93750
46	Մետաղական կանգնակների տեղադրում խողովակներից	տն	0,36	450000	162000
47	Մոնոլիտ երկաթբետոնե ծածկի իրականացում B-20 դասի բետոնով	մ³	2,8	37000	103600
	Ջրամատակարարում և կոյուղի /դպրոցի մասնաշենք/				0
	Ջրամատակարարում				0
48	Ø50մմ պողպատյա ջրագազատար խողովակների տեղադրում	մ	12	1800	21600
49	Ø20մմ պողպատյա ջրագազատար խողովակների տեղադրում	մ	45	800	36000
50	Ø15մմ պողպատյա ջրագազատար խողովակների տեղադրում	մ	50	600	30000
51	Խեցե արտասահմանյան լվացարանի տեղադրում	հատ	7	24000	168000
52	4-րդ կարգի գրունտի քանդում ձեռքթով	մ³	3	1800	5400
53	Գրունտի ետլիցք ձեռքթով	մ³	3	1200	3600
54	Ø50մմ խցանային փականների տեղադրում	հատ	4	9000	36000

55	Ø15մմ ծորակի տեղադրում	հատ	8	6500	52000
56	Ø20մմ խցանային փականների տեղադրում	հատ	7	6000	42000
57	Ø15մմ փականների տեղադրում	հատ	10	5000	50000
58	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,012	450000	5400
59	Պոլիէթիլենային բաքերի տեղադրում 300լ, լողացող փականով	հատ	2	85000	170000
60	Ø15-32 մմ պողպատյա խողովակների ապամոնտաժում	մ	20	200	4000
61	Համակարգի փորձարկում	մ	107	200	21400
62	Խողովակների երկշերտ յուղաներկում	մ²	35	900	31500
63	Φ100 մմ անցքերի շաղափում	տեղ	10	2500	25000
64	Ø20մմ ջրաչափական հանգույցի իրականացում ջրաչափով, զրիչով, փականով	լրակազմ	1	25000	25000
65	3Cpm-80 մակնիշի պոմպի մոնտաժում, 12մ³/ժամ, 0.45կվտ, 38մ	հատ	1	180000	180000
66	Միաձույլ բետոնե հիմքերի պատրաստում պոմպի տակ	մ³	0,05	37000	1850
67	Խարիսխային հեղյուսների տեղադրում	տն	0,005	450000	2250
68	Մանոմետր եռանցք ծորակով Ø15մմ	հատ	1	7500	7500
69	Φ50մմ հակադարձ փականի տեղադրում	հատ	1	15000	15000
70	Φ200մմ պողպատե խողովակ-պատյան	մ	1,2	4500	5400
71	Պատյանի և խողովակի միջև խծուծի լցում	տեղ	2	2500	5000
72	Ճկուն խողովակներ Ø15մմ, L=0.5մ	հատ	14	3000	42000
73	Բետոնե հատակի բանդում	մ³	0,3	3000	900
74	Բետոնե հատակի կառուցում բետոնից 30մմ հաստությամբ	մ³	0,3	37000	11100
75	Շին աղբի հավաքում և բարձում ձեռքով ավտոինքնաթափերի վրա	տն	1	4500	4500
76	Տեղափոխում 2 կմ	տն	1	2500	2500
	Կոյուղի				0
77	Ø100մմ թուջե խողովակների տեղադրում պատերի վրա	մ	21	4500	94500
78	Ø50մմ թուջե խողովակների տեղադրում պատերի վրա	մ	17	2500	42500
79	Φ50մմ պլաստմասե խողովակների տեղադրում	մ	17	2500	42500
80	Φ100մմ պլաստմասե խողովակների տեղադրում	մ	22	4500	99000
81	Φ100մմ անցքերի շաղափում	տեղ	22	2500	55000
82	Φ200մմ պողպատե խողովակ-պատյան	մ	1,4	4500	6300
83	Φ50մմ պոլիէթիլենային անկյունակ	հատ	7	800	5600
84	Գրունտի բանդում ձեռքով	մ³	12	1800	21600
85	Գրունտի ետլիցք ձեռքով	մ³	12	1200	14400
86	Պատյանի և խողովակի միջև խծուծի լցում	տեղ	2	2500	5000
87	Φ50մմ ալյումինե հոսակի տեղադրում	հատ	6	6500	39000
88	Φ50÷100մմ թուջե խողովակների ապամոնտաժում	մ	10	200	2000

89	Ասիական թասակների ապամոնտաժում	հատ	2	2500	5000
90	Φ50մմ ալյումինե հոսակի ապամոնտաժում	հատ	2	200	400
91	Φ50-100մմ թուջե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,118	450000	53100
92	Ասիական թասակների մոնտաժում	հատ	5	22000	110000
93	Խեցե գուգարանակոնքի տեղադրում տակառիկով և իր մասերով	հատ	2	26000	52000
94	Պոլիէթիլենային ձևավոր մասերի տեղադրում	հատ	34	800	27200
95	Բետոնե հատակի քանդում	մ³	1,8	3000	5400
96	Բետոնե հատակի կառուցում բետոնից 30 մմ հաստությամբ	մ³	1,8	37000	66600
97	Ասիական թասակների շուրջը բետոնացում	մ³	1	37000	37000
98	Շին աղբի հավաքում և բարձում ձեռքով ավտոմինքնաթափերի վրա	տն	4	4500	18000
99	Տեղափոխում 2 կմ	տն	4	2500	10000
	Ջեռուցում /դպրոցի մասնաշենք/				0
100	M-140-AO տիպի թուջե մարտկոցների տեղադրում	համար.	261,8	3300	863940
	Էլեկտրոմոնտաժային աշխատանքներ /դպրոցի մասնաշենք/				0
101	Հոսանքի հաշվիչի /երկտարիֆ/ տեղադրում	հատ	1	74000	74000
102	Հոսանքի տրանսֆորմատոր	հատ	3	5900	17700
103	Պղնձե հաղորդալար փակ էլ. ցանցի համար	մ	1098	350	384300
104	Պղնձե հաղորդալար փակ էլ. ցանցի համար	մ	280	350	98000
	Ջրամատակարարման արտաքին ցանց				0
105	4 կարգի գրունտի մշակում ձեռքով	մ³	37	1800	66600
106	4 կարգի գրունտի մշակում 0,5մա շերեփի տարողությամբ էքսկավատորով կողալիցքով	մ³	80	1500	120000
107	Քանդած գրունտի ետլիցք բուլդոզերով	մ³	80	800	64000
108	Գրունտի ետլիցք ձեռքով	մ³	38	1200	45600
109	Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ավտոմեքենաները	մ³	7	4500	31500
110	Տեղափոխում 2 կմ	տն	14	2500	35000
111	Φ 50մմ պողպատյա էլեկտրաեռակցված խողովակների տեղադրում փորձարկումով	մ	120	1800	216000
112	Φ 50մմ պողպատյա խողովակների ուժեղացված մեկուսացում	մ	120	1900	228000
113	Φ50մմ թուջե սողնակի տեղադրում	հատ	1	24000	24000
114	Φ50մմ կցաշուրթերի եռակցում	հատ	2	2500	5000
115	Դիտահորի ծածկի շուրջ բետոնացում	մ³	0,4	37000	14800
116	Միացում գործող գծին Φ 50-100մմ	հատ	2	25000	50000
117	Ե/բ հավաքովի դիտահորի կառուցում	մ³	0,76	37000	28120

118	Թուջե մտոց	հատ	1	16000	16000
119	Φ50մմ տրամագծի խողովակների լվացում, ախտահանում	մ	120	200	24000
120	Պողպատե ձևավոր մասերի տեղադրում	տն	0,025	450000	11250
121	Մետաղական աստիճանների տեղադրում	տն	0,008	450000	3600
122	Աստիճանների երկշերտ յուղաներկում	մ²	0,01	900	9
123	Հիմքերի իրականացում կանգնակների տակ	մ³	0,03	37000	1110
124	Խճային նախապատրաստական շերտ դիտահորի տակ	մ³	0,1	13000	1300
125	Φ300մմ խողովակ-պատյանների տեղադրում	մ	3	8000	24000
126	Φ125մմ թուջե հակահրդեհային հիդրանտի տեղադրում	հատ	1	65000	65000
127	Հիդրանտի տակ թուջե հենարանի	տն	0,048	550000	26400
128	Φ100մմ կցաշուրթի եռակցում	հատ	2	2500	5000
129	Դիտահորի պատերի ջրամեկուսացում բիտումի մաստիկով	մ²	9	1200	10800
130	Մետաղական ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0,01	450000	4500
131	Շինաղբի հավաքում և բարձում ձեռքով ավտոինքնաթափեր	տն	2	4500	9000
132	Տեղափոխում 2 կմ	տն	2	2500	5000
	Կոյուղու արտաքին ցանց				0
133	4 կարգի գրունտի մշակում ձեռքով	մ³	30	1800	54000
134	4 կարգի գրունտի մշակում 0,5մա շերեփի տարողությամբ էքսկավատորով կողալիցքով	մ³	70	1500	105000
135	Բանդած գրունտի ետլիցք բուլդոզերով	մ³	60	800	48000
136	Գրունտի ետլիցք ձեռքով	մ³	30	1200	36000
137	Ավելորդ գրունտի բարձում ձեռքով անտոմերենաներ	մ³	8	4500	36000
138	Տեղափոխում 2 կմ	տն	16	2500	40000
139	Φ200մմ ասբոցեմենտե խողովակի մոնտաժում խրամուղիներում	մ	104	2200	228800
140	Կլոր հավաքովի ե/բ կոյուղու հորեր, բետոն B-12,5 /այդ թվում առվակի համար/	մ³	3,04	37000	112480
141	Թուջե մտոց	հատ	4	16000	64000
142	Դիտահորի պատերի ջրամեկուսացում բիտումի մաստիկով	մ²	32	1200	38400
143	Φ300մմ խողովակ-պատյանների տեղադրում	մ	2.4	8000	19200
144	Խճային նախապատրաստական շերտ դիտահորի տակ	մ³	0,4	13000	5200
145	Մետաղական աստիճաններ	տն	0,03	450000	13500
146	Մետաղական ներդիր էլեմենտների տեղադրում	տն	0,02	450000	9000
147	Մետաղական աստիճանների յուղաներկում	մ²	0,02	900	18

148	Շինաղբի հավաքում և բարձում ձեռքով ավտոհինքնաթափեր	տն	2	4500	9000
149	Տեղափոխում 2 կմ	տն	2	2500	5000
	Ցանկապատ				0
150	Խրամուղու փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտերում	մ³	24	1600	38400
151	Փոսորակների փորում ձեռքով 3-րդ կարգի գրունտերում	մ³	9	1800	16200
152	Միաձույլ ժապավենային բետոնե հիմք B-7,5 դասի բետոնից	մ³	12	37000	444000
153	Պատերի իրականացում ուղիղ կտրվածքի տուֆ բարերով	մ³	10,2	28000	285600
154	Մետաղական կանգնակների տեղադրում խողովակներից	տն	4,02	450000	1809000
155	Հիմքերի իրականացում կանգնակների տակ	մ³	7,8	37000	288600
156	Ցանկապատների իրականացում մետաղական ցանցերից	մ	121,2	19500	2363400
157	Մետաղական ցանցավոր դարպասի տեղադրում	հատ	1	185000	185000
158	Մետաղական ցանցավոր դռնակի տեղադրում	հատ	1	18000	18000
	Ընդամենը				45698527
	Շահույթ 5 %				2284926
	Ընդամենը				47983453
	ԱԱՀ 20%				9596691
	Ընդհանուրը				**57580144**

Հիսունյոթ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար մեկ հարյուր քառասունչորս ՀՀ դրամ

Պատվիրատու

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք. Արմավիր, Աբովյան 71
Հ/Հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276

Փ. Հարությունյան

Կապալառու

«Միլաքս Գրուպ» ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Արմավիր Փ/Ա 18
Հ/Հ 205032200482
«Տնենկոբանկ» ՓԲԸ Արմավիր մ/ճ
ՀՎՀՀ 04403097

Ա. Տեր-Պողոսյան

Հավելված № 2
<<_13>>_____02_____ 2012թ.
կնքված աշխատանքների կատարման
№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-6 գնման պայմանագրի

Կապալառու	Պատվիրատու
_____	_____
_____	_____
հասցե _____	հասցե _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<___>> _____ 20 թ.

Պայմանագրի անվանումը՝----------

Պայմանագրի կնքման ամսաթիվը <<___>> _____20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և կատարողը՝ ի դեմս_____ , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ <<___>> _____20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի /պատասխանատու ստորաբաժանման/ N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները /այսուհետև՝ աշխատանքներ/ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Կատարողը <<___>> _____20 թ.-ից՝ <<___>> _____20 թ.ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ ժամանակա-ցույցի/
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
Հասցե՝	Հասցե՝
անվանում՝ _____	անվանում՝ _____

Հավելված № 3

<<__13__>>__02____2012թ.

կնքված աշխատանքների կատարման

№ ՀՀ ԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-12/1-6 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

(հազար ՀՀ դրամ)

N ը/կ	Գնման առարկայի անվանումը	Ֆինանսավորման գումարը ՀՀ 2011թ. պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը տարի**
1	ՀՀ Արմավիրի մարզի գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ		57580,144	57580,144	57580,144	57580,144	57580,144	57580,144	57580,144					57580,144

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր Փ/Ա -18
հ/հ 205032200482
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ <<Արմավիր>> մ/ճ
ՀՎՀՀ 04403097

Ա.Տեր-Պողոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
հ/հ 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀՎՀՀ 04415276

Փ.Կարապետյան

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արմավիրի մարզի *գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման* աշխատանքների

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը (ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Քանդման աշխատանքներ	1507280	Պայմանագիրը ուժի մեջ մտ. օրվանից	30.03.12թ
2	Ջրամատակարարման և կոյուղու արտաքին և ներքին ցանց Էլ.մոնտաժային աշխատանքներ	13923900	Պայմանագիրը ուժի մեջ մտ. օրվանից	02.06.12թ
3	Կառուցման աշխատանքներ	13 000 000	Պայմանագիրը ուժի մեջ մտ. օրվանից	10.07.12թ
4	Հարդարման աշխատանքներ	29 148 964	Պայմանագիրը ուժի մեջ մտ. օրվանից	20.08.12թ
	ԸՆԴԱՄԵՆԸ	**57 580 144**		.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր Փ/Ա -18
h/h 205032200482
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ <<Արմավիր>> մ/ճ
ՀԿՀՀ 04403097

Ա.Տեր-Պողոսյան

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արմավիրի մարզպետարան
ք.Արմավիր, Աբովյան 71
h/h 900331131079
Արմավիրի ՏԳԲ
ՀԿՀՀ 04415276

Փ.Կարապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված գնման պայմանագրերի մասին

Հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն

2012թ. փետրվարի 13-ին ՀՀ Արմավիրի մարզպետարանի, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան 71 հասցեում և <<Միլաքս Գրուպ>> ՓԲԸ -ի, որը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, ք.Արմավիր Փ/Ա -18 հասցեում, միջև կնքվել է կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր /այսուհետև՝ պայմանագիր/:

Գնման առարկա է հանդիսանում Հայաստանի Արմավիրի մարզի գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքները:

Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է կազմում է 57 580 144 (հիսունյոթ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար մեկ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ:

Գնումը կատարվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի գ. Բերքաշատի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ «Բանակցային ընթացակարգ՝ առանց հայտարարության» գնում կատարելու ձևով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29 սեպտեմբերի 2011 թվականի N 1436-ն և 15-ը դեկտեմբերի 2011թ. N 1789-ն որոշումները;

<<ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ>> ՊԿՀ

13.02.2012թ.